տունը համարեցէք: Ես էլ օտար չեմ: Փառք Աստծոյ, հայ
եմ, քրիստոնեայ, ձեզ հետ մին աւալցանում մըրատւած, մին
մեռնով կնքուած: Անունս էլ լինի ձեզ ծառայ Թեոս:

ՊՈՒՂՅՈՒ — Տղայ՝ Թիոս, Աստուած շնորհըդ էլ աւելացնի: Էդ է
քիթ ու արունգիցդ երեւում է, որ աշխարհ տեւած քաղա-
քավարութիւն բանեցրած մարդ ես. այսինքն թէ կարող ես
շ էշի կերակուրը էնտիս բաժանես, որ շ մասն էլ քեզ ընկնի:

ԹԵՒՈՍ — Հի հի հի. սուս չես ասում ազբերացու. կարող եմ:
Գիդում ես ինչ կայ, ազբերացու. դու ինձ շատ զուր եկար:

ՊՈՒՂՅՈՒ — Տեսնում եմ բալան կծիմ: Աստուած է, գիմը զժին տես-
նելուս, հակատը օխուց թիզ յետ-յետ կգնայ: Ազբերացու,
ասում են զիժի տեսակը 70 կլինի, դու որ տեսակից ես:

ԹԵՒՈՍ — Ես միջին տեսակից եմ, զաւ որ տեսակից ես:

ՊՈՒՂՅՈՒ — Իսկ ես առաջին և վերջին:

ԹԵՒՈՍ — (Ծիծաղկց ծնկներին լիփելով): Հա հա հա, դօրթ է
Աստուած վկայ:

ՊՈՒՅԻ. — Որդեակ թեսու:

ԹԵՒՈՍ — (Զգաստանալով և ձեռքերը փորին գնելով): Համմէ,
Աստուած:

ՊՈՒՅԻ. — Նեղութիւն չլինի, գնա տանտիրոջ յայտնիր, Աւետա-
րանցից մարդիկ են եկիլ, մի բոպէ թող նեղութիւն քաշի:

ԹԵՒՈՍ — Ես բռայիս, կարգիս մատաղ:

ՊՈՒՅԻ. — Սպասիր, Աւ թէ կուզես, քո կողմից էլ աւելացրու
ասա մի քիչ փորները 6—6 է անում: Այսինքն ոչ էնքան
ուտելու, որքան խմելու ժամին: Եւ էն ել ոչ թէ թթու-
թան, այլ թէ թուլութեան գաւաղան, որ զիրաբառ կկոչուի
հուանաձորի զինի, կամ թէ ջեղի արազ:

ԹԵՒՈՍ — Հա հա հա, արեգ վկայ, աղքերացու, ոտներդ շատ
թեթի է, որովհետեւ մեր կնանիքը էսօր կլօլակ են եփել:
Ճի ճի, ես որ ծմակից չենամէջի էշով տուն հմ զալիս, փո-
րը լըխկարգում է, ախորժակա՛ վասվում, երեի դուք էւ
ձիով էք եկել, իմ օրի կլինէք: Բայց միամիտ կացէք, ուտել
խմելու կողմից: Մելիք-Ալլահվերդի տունը էնքան առատ
է, որ թէկուզ օխարը պորտներդ ուտի—խմի:

ՊՈՒՅԻ. — Եղ լաւ եղաւ, որ կլօլակ էք եփել, ծամելու կողմից
նեղութիւն չենք քաշիլ:

ԹԵՒՈՍ — Հա հա հա, զիտէք, Աստուած, աղէ, աղքերացու ես
շատ հմ ուրախանում, երբ ձեզ նման հիւրեր են դալիս, ո-
րովհետեւ մեր ուեխով էլ համել պատառներ են ընկնում:
(Տըրուելով): Աղքերացու, մէկ էս կողմ նեղութիւն քաշիր,
2 խօսք ունիմ:

Երաժշտորիւն:

№ 14

Աղքերացու, ներես լեզուս չի զալիս,
Էս պրիշակում ինձի աղջիկ չեն տալիս,

Թէ Վարանդա կայ մին հալալ կաթնակեր
Արի աղքեր, արան նորան ինձ ընկեր, } 2

ՊՈՒՅԻ. — Աղքերացու, լաւ ասացիր, քեզ համար,
Մին լաւը կայ, լեզուն չանչախ, քիչ յիմար:
Չես փոշմանի զու մու նըրան լաւ ջան է, } 2
Քիչ կուտարար, ու անունն էլ Ռէհան է,

ԹԵՒՈՍ նի ՊՈՒՅԻ. — (Մէջքները իրար բաելով):
Էշը էշին պարտք կը քորի, } 2
Ես քեզ քորեմ զու ինձ քորի:

ԹԵՒՈՍ — Դէ խփի զայ, } 2
ՊՈՒՅԻ. — Գայ ու գնայ, } 2
(Զեռք հն խփում): —

ԹԵՒՈՍ — Աղքերացու, զո խօսքերը անգին է,
Բայց հարսնացուն ով է, որի՞ աղջիկն է:
Էնպէս լինի, որ մելիքս հաւանի,
Ու չը լինի, առանիցը մեզ գուբս անի: } 2

ՊՈՒՅԻ. — Աղքերացու, հարսնացուդ լաւ աղջիկ է,
Մին պատուաւոր, շատ լաւ մարդի կնիկ է,
Կուզես ցոյց տամ, թէ հաւանիս քեզ լինի,
Չես հաւանիլ մեր աղքանքն է մեզ լինի: } 2

ԹԵՒՈՍ — Էշը էշին և այլն:

ԹԵՒՈՍ — Աղքերացու, լաւ էր բանը շուտ լինէր,

ՊՈՒՅԻ. — Ես կընքահայր, սա հարսնացու, սա տէրտէր:

ԹԵՒՈՍ — Եղ լու եղաւ, եւ չեմ ընկնի սար ու ու ձոր
 ՊՈՒԳԻ — Ես էլ բեղ հիտ ընկեր կր լինեմ ամեն օր:
 ԹԵՒՈՍ — Աղպերացու առաջ արա մեղ ճանաչ.
 ՊՈՒԳԻ — Մի ամաչի, մօտ կաց թուշին խըփիր պաչ:
 ՈՒՀՅԻՆ — Հայր-սուրբ տեսած կամ լսած կաս էսպէս բան:
 ԴՈՒՅ. — Մի նեղանայ, կատակ բան է, քոյր ՈՒՀՅԱՆ:
 ՊՈՒԳԻ — Չեմ հասկանում էս ինչ բան է:
 ՊՈՒԳԻ — Բալան կծիմ, բաւական է:
 ԹԵՒՈՍ — Ինձնից լաւին պէտք է զընար
 ՊՈՒԳԻ — Որ չի դիտում զըլուխը քար:
 ՈՒՀՅԻՆ — Ա՛չ, ասեցէք: (Ճանդ):
 ԴՈՒՅ. — Վերջ զըրեցէք:
 ՈՒՀՅԻՆ — Անամօթներ:
 ԴՈՒՅ. — (Կամաց): Մեղայ Քեզ Տէր:
 ՊՈՒԳԻ — Աւելի լաւ կանենք սուս անենք,
 Բան մեր մէջ եղածը դուրս հանենք:
 ԹԵՒՈՍ — Թէ չէ մելիքս իմանայ,
 Ամենքիս վըրան կը բարկանայ:
 ՊՈՒԳԻ — Եկ եղածը պարագեեք,
 ԹԵՒՈՍ — Ու վրեն մին քար դընենք:
 (Թևոս վախչում է յետ):
 ՊՈՒԳԻ — Ես կարծել եմ մին Ղարաբաղ է, մին Պուլի. քայց
 չէ, բանից դուրս է գալիս աղբերացու էլ եմ ունեցել Հայր
 ուուրբ, դէ կարգիդ մենանմ, հօ գիտես ինչու ենք եկել
 ուրեմն ինչ որ երգելու լինեմ, ձայն պահէք:
 ԴՈՒՅ. — Միայն թէ, ի սէր Ասածոյ, էլի այն օրուայ նման ինձ
 սար ու ձոր չքցես:
 ՊՈՒԳԻ — Բանիդ կաց, բանը էնպէս գնայ, ինչպէս նըրանց գի-
 նին ու կլօլակն է մեր կոկորդով զնալու: Աղջի ՈՒՀՅԱՆ, զու
 էլ էդ անտէր գուլբան մին ըոպէ գոտիկիդ տակը կոլիիր:
 Լաւ մտիկ արա, ուղտի անջիում քնած պողոճի նման տաղ
 մի անիլ: Ինչ որ երգելու լինեմ հայր-սուրբի հետ ձայն
 պահիք:

ԹԵՀՅԻՆ. — Լաւ, լաւ, միայն թէ էլի պըլ պըլ զուրս չտաս:
 ԹԵՒՈՍ — (Շոտարաւ յետ եկաւ): Աստուած, աղի, աղբերացու.
 ուսի կանգնիցէք, եկաւ (Մուտքի մօտ ձեռքերը փորին
 կանգնից):

4

ՆՐԱՆՔ ԵՒ ԱԼԱՀՎԵՐԴԻ:

Երաժշորինն:
№ 15

Ո.Լ. — (Թուրը կապած յետ եկաւ):
 Այդ ինչ պատիւ էք արել.
 Ու իմ բերդը շնորհ բերել:

ԵՐԵԲՈՎ. —

Մեր մելիքն է ուղարկել	}	2
Մի մեծ գործ է մեղ յանձնել		

Ո.Լ. — Զարմանալի նորութիւն
 Ու ձեզնից եմ ես լսում,

ԵՐԵԲՈՎ. —

Մի զարմանայ ամեն բան	}	2
Ունի մելիք իր վախճան.		

Ո.Լ. — Զեր մելիքն իմ թրշնամին
 Կուղէ տիրել իմ երկրին:

ԵՐԵԲՈՎ. —

Երեկ այդպէս էր խելքին	}	2
Այսօր վչեց նոր քամին:		

Ո.Լ. — Տէրը գիտէ իր բանը
 Թողէ անէ ղատաստանը:

ԿՐԵԲՈՎ. — Նա վազուց է մոռացել
Աւ այդ մասին փոշտաճել
— 2

Ա.Լ. Եթ ՆՅԱՆՅԻ. —
Որ այդպէս է խօսք բանանք
• երար միտք լաւ հասկանանք:
Թէ մի աշող ելքի գանք
Հաշտոչթեան գուռը բանանք:
— 2

Ա.Լ. — Ողջամբ էք եկել իմ Խոխանարերդ: Աչքիս վրա աեղ ու-
նէք: Համեցէք: (Նստեցին զիմաց-դիմոցի): Գալներէ բարի
լինի:

Դ.Ա.Խ. — Բարի է, տէր մելիք:

Ա.Լ. — Ցոված էք երեսում:

Դ.Ա.Խ. — Սյու ըս բերզը այնքան բարձր է, որ ձիանելիս սան-
ձը բռնած ուրքով ենք բարձրացիլ:

Ա.Լ. — Սյու հայր-սուրբ: Մոյզէս են բոլոր մելիքների բերդերը:
Են, ասացէք, այս լինչ պատիւ է, որ արել էք մեղ... անար-
ժաններիս:

Դ.Ա.Խ. — Այսուած մի արասցէ, մելիք: Անարժանը մենք ենք
և ոչ թէ գու: Դու բոլոր միւս մելիքների մէջ յայտնի ես
երբ մի բարեպաշտ բրիստոնեայ:

Ա.Լ. — Այսուածինայիւ ես չեմ մոռացել այն չարաբասաիկ օրը,
երբ թրով ու սրով էլք եկել մեր վրա:

Դ.Ա.Խ. — Հիմայ էլ եկել ենք այս օրը մոռանալ տալու:

Ա.Լ. — Եսկ եթէ կոռուի եր եկել, համեցէք: Շատ անզամ ենք
կուրծքներս օտար թշնամուն զէմ տուել, հիմայ էլ զէմ կը-
տանք տնային թշնամուն:

Դ.Ա.Խ. — Մելիք Ալահնվերդի, վայելում են քո քաջութեան այդ
խօսքերը, բայց թնդ յայտնի լինի քեզ, որ մենք բերել ենք
Վարանզայի տէր հզօր՝ Մելիք-Շահնազարի բարի ողջոյն-
ները:

Ա.Լ. — Մելիք-Շահնազար և բարի ողջոյններ, Նայեցէք, չեհի
յանկարծ ձիւն դայ:

Դ.Ա.Խ. Հաւատամ, տէր մելիք, որովհետեւ այս երկար ճանփան Ա-
ւեհտարանացից մինչ Խոխանարերդ զուր չենք կտրել:

Ա.Լ. — Դէ զնէ ասացէք, — ինչպէս կատարուեց այդ հրաշքը,
ես շատ լու գիտեմ, որ Մելիք-Շահնազարը յամտ է և
կողք, ինչպէս մեր բերձերը:

Դ.Ա.Խ. — Տեղը զիտէ, մելիք: Մեր մելիքը որբան պառաւում է,
այնքան աղօթասէր է զանուում: Այ ես ինքս եմ զրել նրա
կտուկը: Նա իր հաւաքած բոլոր սոկներով կտակել է, —
շինել եկեղեցիներ, կախել աղբիւրներ, անցկացնել կամուրջ-
ներ:

Դ.Ա.Խ. — Ես էլ հնաց էղ պատճառով կտակել իմ, որ ինձ իր
ուրքերի տակ թաղեն: Այ, հարցրու հայր սուրբին: թէ Էնօ-
րուայ կոռուի մասին ինչպէս է փաշմաններ, Էնպէս է թէ չէ,
հայր-սուրբ, Էնպէս է թէ չէ Ռէհանու Ասում է, այ մարդ,
սա նս յիմարացայ, գնաք ինչու մին բերան չասցիք, թէ
ախար գու Մելիք: Ալահնվերդի նման աղնիւ, բարի մարդի
հետ մին աղբերաբաժին չունէիր, էլ ինչի էիր խեղճի զիսին
կոռուի զնացել: Էնպէս է թէ չէ, հայր-սուրբ:

Դ.Ա.Խ. — (Գաւազանի ծայրով բշտելով նրան): Այնպէս է, որդի,
այնպէս է:

Պ.Ա.Խ. — Էնպէս է թէ չէ, Ռէհան:

Ո.Է.Հ.Յ. — Էնպէս է, Էնպէս է:

Ա.Լ. — Եթէ այդպէս է, ինչու էր չար մաքով իմ հողը ուրք
դրեւ: Զէ որ եթէ հայր-սուրբը չինէր, իզուր աեղը հարիւ-
րաւոր մարդկանց արիւնը պիտի թափուէր:

Դ.Ա.Խ. — Մելիք-Ալահնվերդի, ինդլուս եմ հին զարմանը քամիի
չտառ: Դու Ազգասիրութեամբ մի բացառութիւն ես կազ-
մում և հենց այդ է, որ մեզ իրաւունք և համարձակութիւն
է տուել, որ քո մօտ ենք շնորհ լիրի:

Ա.Լ. Վախենասմ եմ, չինի իմ բարութիւնը վախկուութեան շարքը
դառէք:

- ՊՈՒՅԻ. — Աստուած մի արտօղեց, մելիք:
- Ո.Լ. — Ռուբեն թող օրհնուի այն բողէն, որ ոտք էք դրեւ իմ բերդը: Տղայ Թեհա:
- ՊՈՒՅԻԱ. — Համեմէ, տէր մելիք:
- Ո.Լ. — Լսեցիր մեր խօսակցութիւնը, հասկացնոր:
- ՊՈՒՅԻԱ. — Մին քէշ հասկացայ, բայց մի բիչ էլ որ պարզ հրաժայիս, աւելի լաւ կհասկանամ:
- Մ.Լ. — Գնա գինիի կարաս բացել տուր, ոչխար մորթել տուր:
- ՊՈՒՅԻԱ. — Աչքիս վրա, մատազ, ինչ որ լաւ է, լաւ է: ինչ որ բարի է, բարի է: ինչ որ խելօքէ խելօքը կս բողէիս: (Յետ):
- ՊՈՒՅԻ. — Մելիք ջան, իման ուն հս,—մեր մելիքը խոսավանաքին Դուկաս հայր-սուրբին ինչ է ասել:
- Ո.Լ. — Ի՞նչ է ասել:
- ՊՈՒՅԻ. — (Բղելով Պուղիին, Կողմ): Էլի սկսեց անիծածը:
- ՊՈՒՅԻ. — Ասել է, եռ վաղուց գնացած կինէի Մելիք: Աւոհն վերդիի ուռքը, բայց էզ անիծած ինքնասիրութիւնը չի թողնում: Հայր-սուրբ, ասել է: թէ չէ:
- ՊՈՒՅԻ. — Ասել է, որդի, ասել է:
- ՊՈՒՅԻ. — Աղջի Ռէհան, ասել է, թէ չէ:
- Ո.Լ.ՀԱՆ. — (Կատակի ձեռվ): Պա դէ հայր-սուրբը մելիքին խոստովանցնելիս Ռէհանին էլ ծան էր չոբացըն:
- ՊՈՒՅԻ. — Պա ուրիմն հայր-սուրբը սուտ է ասում:
- Ո.Լ.ՀԱՆ. — Պա դէ էդ է հայր-սուրբը քշտիդ, էլ ինչը ինձ հանրցնում:
- ՊՈՒՅԻ. — (Ծածռէ), Հայր-սուրբ դու մին էդ ծամը կարածին խելքի բեր:
- Պ.ՈՒՅԻ. — (Պուղիին): Դու քս բանիդ կաց: Քչփչում է Ռէհանի հետ:
- ՊՈՒՅԻ. — Հա մելիք ջան,—Ասել է, զօրթ է, եռ իմանում հս, Մելիք-Ալլահմիրպին բարի մարդ է, բայց վախենում եմ ինձ չների: Հայր-սուրբ էնպէս է, թէ չէ:
- Պ.ՈՒՅԻ. — Այնպէս է, որդի:

- ՊՈՒՅԻ. — Աղջի Ռէհան, էնպէս է, թէ չէ:
- Ո.Լ.ՀԱՆ. — էնպէս է, էնպէս է:
- Ո.Լ. — էն, եթէ այդպիս է, լուր տարէք իրան, որ ես,—իսավնի մելիքս այսօրուանից զէնքս վայր եմ դնում և հաշուաթեան մելինած իր ձեռքը սեղմում եմ ներդամտարաբ:
- Պ.ՈՒՅԻ. — Օրհնեալ լինես տէր մելիք, հազար օրհնեալ լինի քո երկիրը, քո ժողովուրդը:
- Ո.Լ. — Աստուած օրհնի քո տունը, օջաղը: Ծաղկէք, ծլէք, մելիք ջան:
- ՊՈՒՅԻ. — Ամէն, շնմի ինչպէս անենք, որ էս հաշտութիւնը մին բանով զնդացնենք:
- Ո.Լ. — Եղպէս ասուզը, երևի ինքը մտածած կլինի թէ ինչով:
- ՊՈՒՅԻ. — Ճշմարիտ բարրառնցիր, բերանիդ մատաղ: Բանը էդ է, որ մեր մելիքը մին աղայ ունի Զումչուգ բէզ անունով, իսկ զու մին աղջիկ, Մեհրի անունով: Եթէ մեր մելիքը իր տղին ասի եկ Մեհրիին քեզ համար ուղինք, էն ինչ ահասկ աղայ պիտի լինի, որ հօր խօսքին «չէ» ասի: Բայց ի՞նչ կասի քո Մեհրիդ, երբ զու Նրան հակառակն ես սովորցրեւ:
- Ո.Լ. — Դու այդ որտեղից գիտես:
- ՊՈՒՅԻ. — Պա դէ էն օրուայ կոռուց յետոյ ինչպէս լինի, որ հայր աղջիկ Մելիք Շահնազարեանների օխուը ալորաը քաշած չլինէք:
- Ո.Լ. — (Կողմ) Իմաստուն չունն է անիծածը: (Պուղիին): Այն ճշմարիտ է, չիմ ծածկում: Բայց... բանը նա է, որ իմ աղջիկս զեռ բոլորովին երեխայ է:
- Պ.ՈՒՅԻ. — Վնաս չունի. թօղ մէջտեղ զայ, ես, ինչպէս մեր զեղական սովորաթիւնն է, էս մորթոնովս մէջքին կիսինմ, թէ չընկու, մեր ապրանքը լինի:
- Ո.Լ. — Հա հա էն, քան ձեր սիրաը պիտի կոտրեմ, թող թշնամուս մէջքը կոտրուի: Այս բոպէիս գնամբներեմ և հենց ձեր աչքի առաջ համոզիմ: (Յետ):
- Պ.ՈՒՅԻ. — Աղջի էդ էր քո ձայն պէհելդ: Թիւ:

ԳՈՅԻՆ. — Եաւ, մի կառեր: Հիմայ մեաց մի հնար գաճնենք, որ
միւս մելիքներին էլ մի կերպ հարսանիք բերենք:

ՊՈՅԻՆԻ. — Վահ, աջիդ մատաղ, սրանից էլ հեշտ բան: Դու կզնաս
2 մելիքների անունից կիրաւիրես, մեր մելիքը կիարծի էս
մելիքն է կանչել, էս մելիքն էլ կիարծի մեր մելիքն է կան-
չել: Երկուսն էլ տաղ կանեն, պրծաւ, զնաց:

ՊՈՅԻՆ. — Ապրես, Պուղի, խելքի ծով ես, կարզս վկաց:

ՊՈՅԻՆԻ. — Աղջի Ռէհան, ոնց եր: Էլի ուրիշների նման ինձ պըլ
ես ասեի՞ւ:

ՈՒՀԱ. — Դուք ձեր անելիքը տրիք, հիմիկո էլ ինձ, չխանդարէք
ես եւ իմ անելիքը անեմ, Պէտք է աղջկան մին լաւ տնդղեմ,
չմինի թէ մին պակասութիւն ունենայ:

ՊՈՅԻՆԻ. — Եթէ էնոլէս ես տնդղելու ինչպէս ես քեզ, աչքներո
լոյս:

5.

ԵՐԱԾԾՈՒՐԻ Ա:
№ 16

ՆԲԱՆՔ: ԱԼՈՀԱՅԱԲՐԵՒ: ԶԱՆԱՊԱՆ: ՄԵՀՐԵ: ՅԵՂՈՒՅ: ԹԵՂՈՒՅ:

ՏԱԿԱՑԻՐԵՐ:

Մեղ ասէք, մեղ ասէք
ինչ պատիւ էք մեղ արեւ:

—

ՀԵՒՐԵՐ:

Մեր մելիքից ձեղ համար,
Շատ բարեներ ենք բերեւ

ՄԵՇԱՋԻՐԵՐ:

Այդ Ասածոյ պարզին է, պարզ է որ փափկել է
Աւ մեղ համար երկնքից իր շնորհն ուղարկել է:

—

ՏԱԿԱՑԻՐԵՐ:

Գէ մէկ էլ ասացէք
ել ինչ նոր լուր էք բերել:

—

ՀԵՒՐԵՐ:

Մեր մելիքից ձեղ համար
Շատ ուրախ լուր ենք բերել:

2

ՄԵՇԱՋԻՐԵՐ:

Այդ Ասածոյ պարզին է, պարզ է որ փափկել է
Աւ մեղ համար երկնքից իր շնորհն ուղարկել է:

—

ԱԼ. — Եհա իմ աղջիկ Մեհրին, և նրա մայր Զանապանը, Զաշ-
տուելու են եկեւ, Մեհրի քաղցրութիւնով վարուիք:

ՄԵՀՐԻ. — Ուրիշ կերպ ինչպէս կհամարձակուեմ: (Համբուրից
Ղուկասի և Ռէհանի ձեռքը):

ԱԼՀԱՆ. — (Համբուրից Մեհրին և կողմ): Ուժանյ, բերանից վար-
զի հոտ է պալիս: Փառք Ասածոյ, ուղբերումն էլ կաղութիւն
չկայ:

ԱԼ. — Հերերդ են, տիկին Զանապան, ցոյց տուր ինչպիսի տան-
տիկին ես:

ԶԱՆ. — Գալուստներդ մեր Խոխանարերդ բարի լինի, հայր-
սուրբ (Համբուրից նրա ձեռքը): Բարով ես եկեւ քոյր:
(Համբուրուեց համը): Եւ զու անծանօթ եղրայր:

ՊՈՅԻՆԻ. — (Օղի մէջ որպէս թէ սեղմեց և շարժեց նրա ձեռքը):

ՊՈՅԻՆ. — Օրհնեալ լինես քոյր Զանապան, օրհնեալ լինես Խաչէ-
նի օրիորդ:

ԱԼՀԱՆ. — Մին ուղիդ կաց տեսնեմ հօրդ ես եկեւ, թէ մօրդ:
(Նայից և կողմ): Աչքերումն էլ աղիկութիւն չկայ: Պէտք է
փորձեմ, ականջներում չիինի խլութիւն ունենայ:

ՊՈՅԻՆԻ. — Աղջի Ռէհան, կամաց կամաց:

ԱԼՀԱՆ. — (Յած ձայնով): Անունդ ինչ է այ ալ վարդ:

ՄԵՀՐԻ — Անոնս Մեհրի է, աղի:

ՈՒՀԱՆ — Ազին անունիդ մատաղ լինի Մեհրի ջան: Քոյր Զառ նազան, էլ ինչ երկարացնենք, երեխ աւել մելիքը քեզ լայտ նեց թէ ինչու ենք եկել:

ԶԱՆ. — Առանց նրա ասելու էլ այդ է երեսմ է, թէ ինչու եք եկել:

ՈՒՀԱՆ. — Ռւբեմ ինչ կասես՝ որ սրաներս ուրախանայ:

ԶԱՆ. — Ինչ պիտի ասեմ, քոյր, ես մենակ չեմ, որ ասեմ, — Աստուած շնորհաւոր անի, թէ ևս, թէ հայրը, այդ մասին իրաւունքը մեր աղջկանն ենք տուել:

ՈՒՀԱՆ — Ես ասում եմ բանը տաք-տաք սկսել ենք, արի տաք-տաք էլ վերջացնենք, Մէկ էլ չթողնենք պաղի, որովհետեւ ևթէ ձեր աղջիկը մին հրեշտակ է, մեր փեսացուն էլ տեղով մին քաշած պատկեր է:

ՄԵՀՐԻ — Ամօթ չինի հարցնելը, ով է ձեր փեսացուն:

ՈՒՀԱՆ — Վարանդայի տէր ու սիրական Մելիք-Շահնազարի ժառանգը: Ողջ Ղարաբաղի կարիճների աչք, — Զումշուր բէզը: Քեզ պէս աղջիկը էնպէս տղին կապղի, մատաղ:

ՄԵՀՐԻ — Հայր, ինչու ես լուել, Զէս լսնւմ: Նա Մելիք-Շահնազարի անոնցն է տալիս:

ՈՒՀԱՆ. — Լոիր Մեհրի: — Մի մած հանդամանք այսօր ինձ ստիպում է ասել քեզ, որ դու պէտք է զոհես ամեն ինչ:

ՄԵՀՐԻ — Զոհեմ: Ինչի՞ համար: Ուսմ համար: Ոչ, ոչ: Դու իմ պաշտելի ծնող: Դու ինձ չես ստիպի: Դու թոյլ չես տայ, որ բու աղջիկը ուխտաղբուժ լինի:

ԶԱՆ. — Խէլքի նկ, Մեհրի ջան: Հօրդ խօսքը մի կոտրի:

ՄԵՀՐԻ — Մայր, իմ քաղցրիկ մայր: Ճշմարիտ է, որտեղ խօսում է ծնողի կամքը այստեղ պէտք է լրի անփորձ զաւակի լեզուն: Բայց ես մելիքի արիւն եմ, ես իմ տուած խօսքից լիտ կանգնել չեմ կարող: Ես երդուել եմ:

ՊՈՒՅԻ. — Այդ ինչ երգումն է, աւել մելիք:

ՈՒՀԱՆ. — Ոչինչ, չչչն զէպը է, հայր ոսւրբ:

ՄԵՀՐԻ — (Երեսը թագթնելով): Հայր... մի ամաչեցնի ինձ:

ՈՒՀԱՆ. — Ոչինչ, սիրելիս: Այստեղ ամաչելու բան չկայ: Բանը այն է, հայր, ոսւրբ, որ իմ աղջիկը պատահել է մի տղի, որը ուխտել է իրացնետ ձեռք-ձեռքի տուած աշխատի մեզ ըստ մելիքներիս հաշտեցնել:

ՊՈՒՅԻ. — Խաչէնի օրիսրգ: Ես տեսնում եմ, որ այդ տղան հաւսարակ մահկանացու: չպէտք է լինի: Սակայն այդպիսի մի սուրբ գաղափար ես ևմ ներչնչել, և այն, յատկապէս իմ սիրելի աշակերտ Զումշուրին: Եթէ իրօք քեզ համար էլ սուրբ և վիճ է այդ գաղափարը, ապա ամուսնանալով Զումշուրի հետ, աւելի հշշտութեամբ կիրականացնէք նրան:

ՄԵՀՐԻ — Մայր, գոնէ դու օգնութեան եկ ինձ:

ԶԱՆ. — Աղջիկո... (Գրկում է քչփչում հետք):

ՊՈՒՅԻ. — (Կողմ): Է՛, ինչպէս տեսնում եմ, էստեղ էլ առանց սուտի մեր կորկուոը չի եփուելու Մեհրի ջան, քո տած տղան ինչպէս էր հագուած: Կամ ում տղան էր, որտեղացի:

ՄԵՀՐԻ — Հալիձորից էր, ջաղացպանի որդի, շքեղ հագուած:

ՊՈՒՅԻ. — Հա հա հա, աղջիկարմատ՝ որ աղջիկարմատ: Պա հոգիս քեզ մատաղ, իսկի չես մտածել թէ, ջաղացպանի տղին Աստուած շքեղ շորեր որտեղից պիտի տար:

ՄԵՀՐԻ — Այո, ես ինքս էլ եմ մի փոքր կասկածել, բայց...

ՊՈՒՅԻ. — Ել ոչ բայց կայ, ոչ այծ: Աղջի Ռէհան էլի էն տղան է եղեւ է: Անիրտուը գիւղէ զիւղ ման զալով, մին տեղ իրան ծաղիկ կտրող է ասում, մին տեղ արձաթպան, մին տեղ մելիքը թռոն:

ՄԵՀՐԻ — Դու նրան ճանաչում ես:

ՊՈՒՅԻ. — Ինչպէս դու քո նօրն ու մօրն ես ճանաչում:

ՄԵՀՐԻ — Որտեղ ես ծանօթացել հետք:

ՊՈՒՅԻ. — Երկու շարաթ հնալը ծակ եմ նստել, մատաղ Անդամը ինք Ծըկը Առըստամի ջորին զողացել էր, մեղքը ինձ վրա քցել Գիւղի տանտէրն էլ 20 ճիպոտ նրա հանին ու տեցրուց, տասը իմ: Հիմի էլ տեղը ցաւում է:

ՄԵՀՅԻ. — Իսկ ինչ էր նրա անունը:

ՊՈՒԳԻ. — Այ նրա անունը կարուի համ Մին տեղ Սաքի է ասում, մին տեղ Պետի, մին տեղ Օհան, մին տեղ Աւան. Էլ Խամսայի մելիքութիւններում աղջիկ չի թողել, որ գլուխը չխարի: ՉՈՆ. — Վայ ցաւս նրա մօր սրտին: Ա. մարդ, լսում ես Փուշ անզգամը և կել է. հիմա էլ իմ աղջկանս է խելքից տարել:

ՄԵՀՅԻ. — Ա. հիմայ ես բոլորը հասկացայ. Նո ինձ խստում էր տուել, բայց ժխտեց: Հիմայ իս տեսնում եմ, որ ինձ խարի է.

Ո.Լ.՝ — Հոգ մի անի, Մեհյի: Որտեղ էլ լինի, ես գտնել գտամ նրան և նա իր արծանի պատիճը կստանայ:

Պ.ՈՒԳԻ. — Մի տիրի, Խաչինի օրիսրդ: Անշուշտ այսուղ խառն է Աստծոյ սուրբ աջը, որ գալիս է քեզ օգնութեան:

ՄԵՀՅԻ. — Այս հայր-սուրբ, նա գտիս է ինձ օգնութեան: Հայր, մայր, լսեցէք, այս օրուանից այլսո չկայ ինձ համար Աւան անուն երիտասարդ: Տնօրինեցէք իմ վիճակը ինչպէս ձեր կամքն է: Ես ամեն ինչ զոհաբերում եմ սիրելի հայրենիքի անունին:

Պ.ՈՒԳԻ. — Եւ թող Աստուած ամենակարող համարթեամբ ընդունի քո զոհաբերութիւնը բարեմիտ աղջիկ:

6

ՆՐԱՆՅԻ ԵՒ ԹԵՂԻՄՈՒ:

Պ.ՈՒԳԻ. — (Յետ է գալիս զինի և այլն բերելով): Ամէն, ամէն, Աստուած, աղի, աղբերացու: Մելիք-ջան, մինչև ձիթիքի ժին պատրաստ կլինի. Թող հիւրերդ մին քիչ կոկորդները թրջն, փորները տաքացնեն, թէ չէ աղբերացուիս փորը մէջքից է կպել:

Ո.Լ.՝ — Կեանքում մին խելօր բան արիր: Դէ, լիցրու բաժակները: Համեցէք, հայր-սուրբ: Խնամքներ, առէք բաժակներդ և ինձ լսեցէք: Վկայ եղէք ամենքու: Ես Մելիք-Ալահակիրդիս այսօր իմ աղջիկ Մեհյիին նշանացի Վարանդայի

տէր Մելիքը Շահնազարի որդի Զումշուղ բէզի հետ: Այսօր բռանից նրա մարդիկ ազատ են Մեղրագետը անցնելու և իմ հիւրը լինելու:

Պ.ՈՒԳԻ. — Եւ թող Խաչինի օրիսրդի ու Զումշուղի ամուսնութիւնը, լինի առաջին և ամուր հիմնաքարը այն աշտարակի, որի վրա պէտք է ծածանուի օ մելիքների ապագայ միութեան սուրբ գրօշակը:

Պ.ՈՒԳԻ. — Ամէն, ամէն, Աստուած:

Պ.ՈՒԳԻ. — Իսկ ես կասեմ: — Եթէ սրանից լաւ բանի տեղ վատ բան գուրս եկաւ, մին օր երեսիս ալիւր ըսեցէց, թարս նստացրէք մին կաղ էշի վրա, պոչը տուէք ձեռքս ու զիւղէ գիւղ մանացրէք ու հարցնողին ասէք, անզգամը մեծ պատ օր մախոսի տեղ, մածուն է լակել:

Պ.ՈՒԳԻ. — Ամէն ամէն, աղբերացու (Խմեցին):

ԵՐԱՄԺՑՈՒՐԻԱ:

№ 8

Պ.ՈՒԳԻ. —

Աստուած պահի, պահպանի
Մեր երկու մելիքներին
Տունով տեղով մար գըլսից
Բոնդ միշտ անպակաս լինին:

Ա.ՄԵՒՆԻՔԻ.

Ապրեն մեր մելիքները,
Երկարի արեները:

2

Պ.ՈՒԳԻ. —

Տեսակ-տեսակ վորձ արի,
Վերջը մին լաւ զործ արի,
Հարսանիքն էլ որ լինի
Ռորիշ ցաւըս չի լինի,

ԱՐԵՎԻՔԻ

Ապրեն մեր մելիքները և այլն:

ՊՈՒՅԻ

Հարսանիքին զուզուելով
Գտար եմ գալու գըժուելով.
Պատուիու եմ փափախըս
Աւսիս բռնած չումախըս,

ԱՐԵՎԻՔԻ

Ապրեն մեր մելիքները
Երկարի արեները:

Հնդհանուր պար, պարում է և Դուկաս:

ԳՐԱՅՐՈՐԴԻ ԱՐԱՐԻ

C P C P 2 0 P P P P P

Սւետարանոցում, Մելիք-Շահնազարի բերդի քակը, Շուրջը
ծառեր, Երկու կողմ տախտեր:

1

ՊՈՒՅԻ ԵԽ ՏՎԵՐԸ ՈՒ ԱՎՋԿԵՐԸ:

ԵՐԱԾՂՄՈՒՅԻՆ:
№ 18

ՊՈՒՅԻ — (Ասիտկան կօմիկ շորեսով, զլիսին մորթոն, ուսին
փայտ, ծայրին շոր):

Մեր մելիքը Շահնազար
Մօրից ծընուած կըսուաբար.
Մէկ էս մէկ էն մելիքին
Կըսծուում էր անդադար.

ԱՐԵՎԻՔԻ

Ապրի ապրի մեզ համար
Ապրի Մելիք-Շահնազար

2

ՊՈՒՅԻ

Իսկ ես նորան ձեռք առի,
Գըլիսիցը ինելքը տարի.
Խաչնի մելիքի հետ
Զուով խընամի արի:

Ապրի և այլն:

Էստեղ ձիաւորուկցինք
Խոխանարերդ գընացինք
Զումչուղին ու Մեհրիին
Վանք տարինք պըսակցինք:

Ապրի և այլն:

Հենց որ բացուի գաղտնիքը,
Գըմուելու է մելիքը
Բայց ինձ ինչ պէտք է անի
Երբ եղել է հարսնիքը:

Ապրի և այլն:

Դէ քէփ արէք իմ խօնեէք,
Ոչ մի բանից մի վախէք
Մելիքը որ բարկացաւ
Լոխ ծակուռածըկուռ փախէք:

ԱՄԵՆՔԸ —

Ապրի ապրի մեզ համար,
Ապրի Մելիք-Շահնազար

2

ՊՈՒՐԻ. — Դէ տղերը, աղջկերը, աչքներդ լուսի. բարով չիլողի համար լինի: Ճիմի գնացէք ու միւս մակարների համ հուռայ կանչելով ներս կզաք: (Ամենքը մշջտեղավ դուրս): Տէր Աստուած (իր ծնոտին խփելով այլ կողմ ըրջուեց): Ասա կըրմղուկի տղա, Աստուածանից խոռվ հօ չես, մին սիխոդ տէս արա ըլհի: Զէ, Աստծուն չպէտք է նեղութիւն տուած: Էս անգամ պէտք է սատանային խնդրեմ: (Շըջուեց): Սատա-

նտ—ոլըտպլըտաննա Դժոխիքի աստառ, գործերը մուռտառ,
մօրից ծնած չար:
(Մէջտեղով եկաւ Շահնազար, ձեռին մի արկղ, չքեղ հա-
զուած):

2

ՊՈՒՐԻ. Եթ ՇԱՀՆԱԶԱՐ:

ՇԱՀՆ. — Տղայ, էդ ինչ բանի ես:

ՊՈՒՐԻ. — Ոչինչ, մելիք, սատանին օգնութեան էի կանչում, ովու
եկար:

ՇԱՀՆ. — Անզգամ, էդ ինչ շորեր ես հագել:

ՊՈՒՐԻ. — Քէֆիս մի կաչիւ մելիք-ջան: Ուխտ եմ արել, պէտք
է ինամինսերիդ մին լաւ ուրախութիւն ցոյց տամ:

ՇԱՀՆ. — Նայիր, անիծած, եթէ նրանց մօտ պարզերես չգուրս
դաս, ձիան պոչից կապել կտամ ու քարքարոտում՝ քաշքել
կտամ:

ՊՈՒՐԻ. — Իսկ եթէ պարզերես զուրս եկայ:

ՇԱՀՆ. — Պըլ անունդ կփոխեմ ու անունդ խելօք կդնեմ:

ՊՈՒՐԻ. — Ես էլ պարտքումդ չմնալու համար, հին անունս քեզ
կրախչեմ:

ՇԱՀՆ. — Հա հա հա, ա շուն, շատ ետ եկածն ես:

ՊՈՒՐԻ. — Բայց ինչ անեմ, որ սրանով փորս չի կշտանում:

ՇԱՀՆ. — Այ ճարի ու տրաքուի քո փորդի Փոր չեղաւ գլխաներիս,
այլ մի տաւարի ցաւ եղաւ: Էլ պանիր չմնաց, եղ չմնաց,
զինի չմնաց, ոչխար չմնաց, որ մէջը չթափելի, չկշտացար
անամօթ:

ՊՈՒՐԻ. — Մի նեղանալ, մատաղ: Վայ, քիչ մնաց մոռացել էի:
Միւսոյ է էն վաճառականի Հնդստան զնալու օրը:

ՇԱՀՆ. — Ինչոչս չի: Զէ որ ես նրան փող տուի հարսիս համար
թանգաղին քարեղիներ բերի:

ՊՈՒՐԻ. — Բայց զու ինձ էլ մին հրաման տուիր:

ՇԱՀՆ. — Համ, ես քեզ հրամայեցի, որ ինձ համար ողջ Ղարաբա-
ղի յիմարների անունները գրես:

ՊՈՒԹԻ. — Այ, զրել եմ: (Տպիս է մի թուղթ):

ՇԱՀՆ. — (Կարգում է): «Մելիք Շահնազար»: Ա չուն, ոտ հօ ա-
մենից առաջ իմ անունս ես զրել:

ՊՈՒԹԻ. — Պա ինչ անէի: Դու կարծում ես ին վաճառականը քեզ
համար քարեղն պէտք է բերէր:

ՇԱՀՆ. — Իսկ եթէ այ, բերել է: (Յոյց տուեց արկդիկը):

ՊՈՒԹԻ. — Վնաս չունի, քո անունդ կչնչեմ, նրանը կդրեմ:

ՇԱՀՆ. — Հա հա...

ՊՈՒԹԻ. — Մելիք-ջան, քանի որ քէ փդ տեղն է, մի բան էլ առեմ:

ՇԱՀՆ. — Ատա զուռնաչի տղալ, քո ասելիքին վերջ պէտք է
լինի, թէ չէ:

ՊՈՒԹԻ. — Քո արե ոտ վերջինն է: Զես ասիլ մեր խնամախօս
գնացած օրը Մելիք-Ալլահիկերդին խօսք քցէց, որ դու միւս
3 մելիքներին էլ հարանիք կանչես:

ՇԱՀՆ. — Ե՞ս իսկ դու ինչն մէկ լաւ չկոթեցիր նրան: Ինչու
չհակացրիր նրան, որ իմ մեռած օրը պէտք է լինէր, որ
այդ աստիճան քաշացնէի ինձ: Ինչու չհակացիր որ վզիցու
թող քցէին: Ես այդ չէի անի: Շատ էր սիրութ ուղում, թող
մարդ ուղարկէր իր անունից հրապիրէր:

ՊՈՒԹԻ. — Վայ, մելիք-ջան, արեղ վկայ, իմաստուն ես: Ես եզ-
պէս էլ ասացի, «Հա, ասաց, որ չգտէս է, ես Դուկաս հայր-
ստրիքին կուղարկեմ իմ անունից կանչի: Միայն չինի թէ
ձեր մելիքը իսեղճերին էնողէս խօսք ասի, որ ամօթից կար-
մրեն»:

ՇԱՀՆ. — Մեղաց քեզ տէր, մեղայ: Տղայ ինչու չհասացիր, որ հո-
րիս նման ծակում չհմ մեծացել:

ՊՈՒԹԻ. — Ես աւելին, ասացի: Ասեցի ով է տեսել որ արեիսը
պատկին բան սովորցնի:

ՇԱՀՆ. — Հա հա հա, ո չուն լու ես կծել:

ՊՈՒԹԻ. — Մելիք-ջան, մին բան էլ ասեմ ու վերջանայ:

ՇԱՀՆ. — Ելի լին:

ՊՈՒԹԻ. — Թո սիրած բազէիդ կրակ տուի, սատկացրի: Անիծնա-
ւը երկնքի թուաններին թողած տան հաւերին էր ճատում:
ՇԱՀՆ. — Ա չուն, եթէ նա մէկն էր ճատում, գու տասնով ես
լափում:

(Յանկարծ երաժշտութեան և ոռանների ձայն Մէջտեղով
գալիս են մակարներ, թնոս մուաքի զոան րոնում է թուրը,
նրա տակով մտնում են, Զումշուդ սարերը փոխած, գլուխը
շարունակ մի կողմ ծռած: Մեհրի գլուխը ցած: Սրանց ե-
տինց Ալլահիկերդի, Զահաղան, Ռէհան և ուրիշներ: Ամենքի
ձեռին վառած մոտ Պուղի, որպէս թէ սրբում է եկաղների
ձագիան դտակով):

3

ՊՈՒԹԻ. ՇԱՀՆԱԶԱՐ, ԱԼԼԱԶՎ, ԶԱՆԱԶԱՆ, ՄԵՀՐԻ, ԶՈՒՄ-
ՇՈՒՄ, ՌԷՀԱՆ թեթիս եի ԱՅԼԲ:

Երաժշտութիւն:
№ 19

ՇԱՀՆ. —

Խնամիներս համեցէք,
Աչքիս վըրա տեղ ունէք.
Միրտը զուռըս այսունետ
Զեղ համար բաց կը դտնէք,

ԱԼ. ԶԱՆ. Եի թեթիս —

Շէն կենայ, չէն տունդ հազար,
Խբնամի Մելիք-Շահնազար,
Մեր տան զուռներն էլ այսունետ,
Բաց կը լինեն ձեղ համար:

2

ՊՈՒՂԱԿԻ

Զեր մէջ ուր որ Տաստատուեց
Սատանի զլուխը ջարդուեց.
Վարանդային Խաչնին
Բախտի մի նոր դուռ բացուեց:

—

ԱՄԵՆՔԸ

Եկեղ Խընդքնք Ստեղծողին,	2
Որ օրհնի պատճառ գառնողին	
Էնտաննիքին, տուն ու տեղին	
Մեղ ուրախ օր արւողին.	

—

Ո.Լ. — Եայիր, խնամի Մելիք-Շահնազար, հակառակ տւանդութեան ևս բերել եմ և հարսիկ մօրրի:

ՇԱՀՆ. — Շնորհակալ եմ, Չեռղ, խնամի Մելիք-Ալահվերդի:

Ո.Լ. — Թող թշնամիներին մէջը կոտրուի, խնամի Մելիք-Շահնազար Արի զրկուենք, մոռացութեան տանք ամեն ինչ: (Վրկուեցին):

ՊՈՒՂԱԿԻ — Խոփէք հուռա, հուռա...

ԹԻՒՐՈՒ — Ազա հուռույ... (Նոյն ամենքը, զրկուեց Պողիի հետ), Ազողերացու, էստեղ լաւ է քան մեր տանը:

ՊՈՒՂԱԿԻ — Էղափէս է, որ զժին տանեն հարսանիք, էղափէս կասի:

ՇԱՀՆ. — Խնամունի Զանազան, խնդրում եմ իմ տունը քո տունդ համարիս, Խոխանաբերդի և Աւետարանոցի մէջի ձամփան 2 թիզ անես:

ԳԱՂ. — Ասուուած տնով տեղավ բախտաւութ անի քեզ, խնամի մելիք, Հող բռնես, ոսկի զանայ, քար կոխ տաս, վարդ բռնի:

ՊՈՒՂԱԿԻ — Ամէն, ամեն, հաւասարական սազ լինէք, խոփէք հուռույ...

ՇԱՀՆ. — Դէ, Ռէհան քեզ տեսնեմ, Գու իմ որդու երկրորդ մայրըն ես, զու քո կաթով ես մեծացրել նրան

Արի ջահելութիւնդ միտ բեր, ու մարդիկ հետ մի լաւ շեցրու այս հարսանիքը,

Ո.Լ.ՀԱՆ. — Միամիտ կաց մնիք-ջան: Էն ինչ Ռէհան պիտի լինի, որ իր աչքի լոյս Ջումշուդ բէղի հարսանիքին ինսամիներիս մօտ սեերես զուրս զայ: Խնամի Զանազան, քո հոգիիդ, արեիդ մատազ, տսա տեսնենք փեսիդ, աղջկանդ ինչ ընձայ ևս տալիս:

ԳԱՂ. —

Մեղրագետի աջ ափին
իմ հողերը, իմ այգին.
Մին մեծ սընդուկ անագին,
Մէջը շորեր թանգագին:

Ո.Լ.ՀԱՆ. —

Շէն կենայ, շէն կենայ
Մեր Զանազան խնամին:

ԱՄԵՆՔԸ — Ամէն, ամէն,

Ո.Լ.ՀԱՆ. — Խնամի Մելիք-Ալահվերդի, տսա տեսնենք դու ինչ ևս տալիս:

Ո.Լ. — Իմ Մեհրիին մեծ սիրով,
Հարիւր ոչխար, Յ կով.
Իսկ Ջումշուզին նոյն կարգով
Մարտալ իմ ձին իր սարքով.

Ո.Լ.ՀԱՆ. — Շէն կենայ, շէն կենայ, Ալլահվերդի խնամին:

ԱՄԵՆՔԸ — Ամէն, ամէն:

ՊՈՒՂԱԿԻ — Ա կնիկ, ցնծա տեսնենք, ինքու ինչ ևս տալիս:
Ո.Լ.ՀԱՆ. — Մին զոյզ գուլրա
Մին հեղրա,

Մին զարթա
Մին զոյզ փաթաթան
Մին ման չորաթան:

ՊՈՒՂԱԿԻ — Եղ Զումշուդ բէղին, իսկ հարաբեց:

ԱԼՀԱՆ — Մին ճախարակ, մին իլիկ,
Մին մեղրով լիքը պուլիկ,
Սանդերք, արգանք, խնեցի.
Մին տաշտ մէջում հաց հունցի:
ՊՈՒԽԻՒ — Պա հօ, ա կնիկ էդ-ողջ լիլինի մին լաւ բեռն, որ էդ-
ողէս է, ես էլ էդ բեռնը տանելու համար բախչեցի.
Մին աւանակ
Մին քուռակ,
Մին զանգուլակ
Մին մահակ:
ՌԵՀԱՆ — Շէն կենայ, շէն կենայ:
ԹԵԽՈՍ — Շէնից մին թիչ դէն կենայ:
ՊՈՒԽԻՒ — Աղբերացու, զու ինչ ընձայ ես տալիս,
ԹԵԽՈՍ — Մին լակաման՝ հաւերին
Մին լափաման՝ շներին,
Մին լաւ չաթու ձիերին
Մին մած կատու մուկներին
(Բնգհանուր ծիծաղ):
ՌԵՀԱՆ — Իսկ զու, այ մեր զիխի տէր տիրական, ըս Զումըու-
դին ինչ ես տալիս:
ՇԵՀԱՆ — Տալիս եմ Վարանդայի իմ մելիքութիւնը
Հետը հայրական իմ օրհնութիւնը:
ՌԵՀԱՆ — Դէ ինչպէս կլինի, որ ինչպէս մեր պապական սովորութիւնն է, հարսիդ էլ մին բերանքացուկ չտաս:
ՇԵՀԱՆ — Քեզ իմ ընձաս,
Այս արկզն է հալու,
Մէջը կը գտնես
Երբ որ կը բանաս:
Ոսկէ շարան ճակատիդ,
Աղամանդ օղ՝ ականջիդ,
Թեքերիդ ոսկէ կոճակ,
Վզիդ մարգարտէ մանեակ:

ԱԼՀԱՆ — Դէ, իմ աչքի լոյս Մեհրի, մօտեցիր:
ԶԱՆ — Մօտեցիր, ձեռքը համբուրիր: այսուհետև նա կլինի ըս
հայրը, իսկ զու նրա հնազանդ թէ աղջիկը և թէ աղախինը:
Այդ բանը զու ցոյց կտաս քո ձեռքով իր ստքերը լուանա-
լով. ինչպէս ես իմ պատրոնի ստքերն եմ լուացել:
ՄԵՀՐԻ — (Սաստիկ կոտրուած սրտով մօտենում է և Շահնազա-
րի ձեռքը համբուրում):
ՇԵՀԱՆ — Շատ ապրիս, որդի: Բայց զու ախուր ես, շարունակ
զլուիդ քաշ: Այդ լաւ բան չէ, սիրելիս:
ԶԱՆ — Մելիք-ջան, ներիս, երեխայ է, ամաչում է:
ՇԵՀԱՆ — Բմմ... եւ անի այդպէս լինէր: Երանի մէջտեղ մի այն-
պէս բան չինէր, որ վազը միւս օր թշնամիներիս բերնում
ծաղրի առարկայ դառնայինը:
ԶԱՆ — Վույ, քուանամ ես. վառք Աստծոյ, ինչ վատ բան
պէտք է լինէր:
ԱԼՀԱՆ — Գուցէ մելիքը մի որ ե է բան է լոկի: Գուցէ որ և է կաս-
կած ունի:
ՇԵՀԱՆ — Ես...ը... ի հարկէ, ես ոչ մի կասկած չունեմ:
ԱԼՀԱՆ — Միրտդ թող չնեղանայ, ես մի պարզ մարդ եմ, և կու-
զէի, որ ամեն ինչ պարզ լինէր:
ՇԵՀԱՆ — Ի՞նչ ես ուզում ասել:
ԱԼՀԱՆ — Ուզում եմ ասել իմ աղջիկը իրաւունք չունի զլուխը
բարձրացնելու, — ոքա համար էլ նա աղջիկ է. — բայց ինչ
ասեմ քո որդուն, որ տպամարդ զոլով, Խոխանարերդից
ոկած, խոռված երեխայի նման շարունակ զլուխը մի կողմ
ծոսծ, մի անզամ էլ իր նշանածի կողմ չի նայել:
ՇԵՀԱՆ — Այդպէս է, Զումշուր:
ԶՈՒՄՇՈՒՐ — (Լուս է):
ՇԵՀԱՆ — Ի՞նչ է նշանակում այդ: Իմ հարս, գուցէ զու ասես,
մէջներդ ի՞նչ սկ կատու է անցել... այդպէս... ժամանակից
առաջ:
ՄԵՀՐԻ — (Լովում է նրա լացը):

ՇԱՀՆ. — Ահ, վկայ է Աստուած, որ սա ինձ դուք չեկաւ:
ՌԵՀԱՆ. — Մելիք-ջան, երևի երեխերը մենցից ամաչում են
եկէք մին բոպէ հեռանանք, նրանց մենակ թողնենք:
ՇԱՀՆ. — Եհ, թող այդպէս լինի: (Ամենքը լիտ):
ԶԱՆ. — Մեհրի...

ՄԵՀՐԻ — Մայր... մայր...

ԶԱՆ. — Մայրդ ջանիդ մատաղ, Աստծոյ սիրուն, այնպիսի բան
չանեն, որ մեր անունը տափը կոխես: (Յետ):

ՌԵՀԱՆ. — Հարս ու փեսա, ձեր արևին, ձեր հոգուն մատաղ:
Աստծոյ տան մէջ, խաչ-աւետարանի առաջ սուրբ խոստու-
մըն էք արել հուր-յաւիտենական մէկզմէկի գլխին տէր ու
տիրական կանգնէք: Աստծոյ անունը տուէք մէկզմէկի երե-
սին նայեցէք և նա ձեր սրտերը էնպէս կմիացնի, ինչպէս
Ռէհանի սիրուն է ուզում:

ՊՈՒԴԻ. — Զումշուգ-բէզ, բալան կծիմ, բացուիր, ես մեռնեմ,
բացուիր: Արևիդ վկայ, ես էլ Ռէհանի երեսը չտեսած եմ
պսակուել, Բայց յետոյ էնպէս սիրեցինք իրար, էնպէս սի-
րեցինք, ինչպէս շուն ու կատու: (Յետ, Ռէհանի թերց բա-
շերվ):

4

ՄԵՀՐԻ ԵՒ ԶՈՒՄՇՈՒԴ ԶՈՒԹՈՒՄ ԵՆ:

Երաժշտութիւն:

№ 20

ՄԻԱՍԻՆ —

Ահ իմ Աստուած դու լըսիր իմ աղաչանքը,
Հեռացրու դու ինձնից այս մեծ տանջանքը:
Տուր ինձ Տէր իմ ոյժ զորութիւն որ կարենամ
Հանեմ սըրտից իմ Աւանին ու մոռանամ
Հանեմ սըրտից իմ Մարիանին ու մոռանամ.

2

Ախ չեմ կարող ջնջել ճակտիս այս գրուածը
Պէտք ընտրեմ երկնից ինձ տնօրինուածը:
Թէ և սա չէ բոլոր սըրտով իմ սիրածը
Բայց ինչ անել կարող է խեղճ ջուրն ընկածը,

} 2

(Ելան ոտքի):

ԶՈՒՄՇ. — (Կողմ): Աստուած իմ: Ինչպէս մօտենամ, ինչպէս
նայեմ:

ՄԵՀՐԻ — (Կողմ): Տէր իմ, ոյժ ու կարողութիւն պարզեիր ինձ,
որ կարողանամ մօտենալ, նայել աչքերին: Ոչ, չեմ կարող,
չիմ կարող... ոտքերս թուլանում են... աչքերս մութ կո-
խում:

ԶՈՒՄՇ. — (Կողմ): Եհ, ինչ էլ լինի, բայց ես տղամարդ եմ: Ա-
սաջինը, ես եմ պարտաւոր մօտենալ: Ոչ... սիրաս բարա-
խում է... Ահ, յանուն Աստծոյ: (Նրան): Խաչէնի օրիսորդ:

ՄԵՀՐԻ — (Կողմ): Աստուած իմ, սա Աւանի ձայնն է: Ոչ, ոչ.
Ես խելագարվում եմ...:

ԶՈՒՄՇ. — ՄԵհրի:

ՄԵՀՐԻ — Ի՞նչ ես ասում, Զումշուդ:

ԶՈՒՄՇ. — (Կողմ): Աստուած իմ: Մարիանի ձայնն է: Ոչ, ոչ:
Հեռու երազանքներ, հեռու ինձնից իմ միտքն ու հոգին
կաշկանդող երևոյթներ: Ահ, (Նորից նրան): Խաչէնի օրի-
սորդ, իսօնիր, ես յսում եմ քո քաղցր ձայնը:

ՄԵՀՐԻ — Քո ձայնը աւելի ես քաղցր է հնչում իմ ականջին:

ԶՈՒՄՇ. — Ահ, տուր ինձ քո ձեռքը: (Բոնից): Նայիր ինձ այն-
պէս, ինչպէս ես եմ նայում քեզ:

ՄԵՀՐԻ — (Հանից երեսի քողը):

ԶՈՒՄՇ. — Ահ, իմ Մարիան, իմ թանգարին, իմ հրաշալի սի-
րեկան:

ՄԵՀՐԻ — Ահ, Աւան-ջան, Աւան-ջան... (Գրկախառնութիւն):

ԶՈՒՄԾ. ԵԽ ՄԵՀՅԻ — Հայր, հայր, այստեղ եկէք, այստեղ. հը-
րաշը, հրաշը:

(Ամենքը յետ են դալիս):

5

ԶՈՒՄԾՈՒԹ, ՄԵՀՅԻ ԵԽ ՄԻՒՄՆԵՐ.

ՅՈՒՀՆ. — Ի՞նչ հրաշը:

ԱԼԼ. — Ի՞նչ հրաշը:

ԶՈՒՄԾ. — Ահ, հայր, ես աշխարհի ամենաերջանիկ մտրդն եմ:
Սա հենց իմ սիրած այն աղջիկն է, որ իր անունը Մարիան
է ասել:

ՄԵՀՅԻ — Այո, հայր, մայր, մի զարմանաք, մի ապշէք, սանա է:
Այն իմ սրտով սիրած երիտասարդը, որ իր անունը ինձ
Աւան էր ասել:

ԱԼԼ. — Ես ոչինչ չեմ հասկանում:

ՅՈՒՀՆ. — Բացազրիք Զումշուդ, ի՞նչ գաղտնիք է սա, ի՞նչ
հրաշը:

ԶՈՒՄԾ. — Լսեցք, առաջին անգամ Մեղրագետի ափին երբ
մենք պատահեցինք, սիրեցինք իրար, նա իր անունն է
Թագցրել ինձնից, ես իմը նրանից: Ահա բոլոր գաղտնիքը:

ԱԼԼ. — Խնամի Շահնակար, երեխերքը սուտ չեն ասում, սա
իսկ որ մի մեծ հրաշը է:

ՅՈՒՀՆ. — Ուրեմն թող, որ այդպէս է, մեր ուրախութիւնը տեի
՛ օր, 7 գիշեր:

ԱԼԼ. — Միայն թէ Խոխանարերդում, — իմ առնը:

ՅՈՒՀՆ. — Ոչ, քանի որ այստեղ էք, կլինի իմ տունը:

ԱԼԼ. — Դուքս կտամ, բայց չեմ համաձայնի:

ՅՈՒՀՆ. — Որ սպանէք, չի լինի ու չի լինի:

ԶՈՒՄԾ. — Մելիքներ, (չոքելով 2-ի մէջանդում), ձեր ջանին, ձեր

անունին մեռնեմ: Զուր կոիւ մի անէք, Եկեք էսպէս անենք
Օխտն օր, 7 գիշեր էստեղ լինի, օխտն օր, 7 գիշեր Խոխա-
նաբերդում:

ԹԵԽՈՍ — Ես ու իմ Աստուածը աղբերացուս լաւ բարբառեց:
ԱԼԼ. — Էհ, ինչ որ խելօք է, խելօք է: Ձեռդ ինամի:

ՅԱՀՆ. — Էհ, թող այդպէս լինի: (Ձեռք բռնեցին): Իմ հարս, էս
բանի վըա մի «Խունկի-ծառ» որ պարես, ամեն ինչ կատար-
եալ կլինի:

ԱՄԵՆՔԸ. — «Խունկի-ծառ», «Խունկի-ծառ»:

ՄԵՀՅԻ — (Պարում է «Խունկի-ծառ»):

bրաժցութիւն:
№ 21

ԱՄԵՆՔԸ. —

Այս մեծ հրաշքին դէմքը պայծառ
Մեր նորահարսը պարի «Խունկի-ծառ»:
Իսկ մենք կը խփինք ծափեր անդադար
Կը զուարճանանք ուրախ մեղ համար:

Դէ հարսիկ ջան աջ ու ձախ
Թըռչկոտիք հոգուդ մատադ
Անուշ աշքով մեղ նայիք,
Թըռնամու աչքը հանիք:

ՆՐԱՆՑ, ԵԽ ԴՈՒԿԱՍ, ԵՍՍՅԻ, ԱԲՈՎ, ԱԻԱՆ ՄԵԼԻՔՆԵՐԸ
ՄէջՏԵՂՈՎ:

ՊՈՒՊԻ. — Խոխեք ճանապարհ, Դուկաս հայր-սուրբը եկաւ, վահ
տեսէք իր հետ ինչ հիւրեր է բերել մեղ համար:

ԹԵԽՈՍ — Աստուած:

ԱՄԵՆՔԸ. — Հուսաց...

ԴՈՒԿ. — Ողջոյն ձեղ սիրելիներ, Ներէք, որ ձեր ուրախութիւնը խանգարեցի:

ՇԱՀՆ. — Վահ, այդ ի՞նչ խօսք է, կարգիդ մատաղ, Քեզանից լաւ հիւր պիտի ուղարկէր մեղ Աստուած, Համեցէք, համեցէք:

ԴՈՒԿ. — Բայց ես մենակ չեմ, ես ինձ հետ ահա բերել եմ 3 ուրիշ հիւրեր:

ՇԱՀՆ. — Թէկուղ 13. բայց ովքելը են սրանք:

ԴՈՒԿ. — Ահա, սա Գիւլստանի Մելիք-Բէզլարեան Մելիք-Արտվուլ Ա-ը, Սա Զրաբերդի Մելիք-Խալակյլիան Եսային. իսկ սա... սա Տիզակի երիտասարդ Մելիք, Աւանը:

ՇԱՀՆ. — Իսկ ի՞նչ եղաւ նրա հայրը:

ԴՈՒԿ. — Նրա հայրը... Նրա հայրը մելիքութիւնը տուաւ իր որդուն, իսկ ինքը ընկաւ Փոքր Սիւնիքի սար ու ձորք, նա ամեն կերպ աշխատեց միութիւն քցել բոլոր 5 մելիքների մէջ: Այդ բանում օգնեց նրան մեր Պուղին: Աստուած լսեց մեր աղօթքները, աջաղեց մեր գործը: Եւ ահա, այսօր նա ձեր մէջն է, նա ձեզ հետ է մինչ իր կեանքի վերջը: (Մի կողմ է ձըում լեզարն ու զգեստը, և յայտնվում է զինուած՝ աշխարհիկ շռերով):

(Քնիանուր ոգևորութիւն:)

ՊՈՒՂԻ. — Այ թէ իսկական հրաշքը որտեղ է եղել: Հուռայ Բուռայ...

ԱՄԵՆՔԸ. — Հուռայ, ապրի Տիզակի մելիքը, Հուռայ...

ԱԻԱՆ. — Հայր, էմ պաշտելի հար... (Համբուրեց հօր ձեռքը):

ԴՈՒԿ. — (Զգացուած): Իմ անզին զաւակ: (Համբուրում է նրա զւուխը):

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ:
№22

ՊՈՒՂԻ. —

Ես օգնեցի հայր-սուրբին
Հաշտեցուրի, ամենքին

Միշտ յիշեցէք իմ արած
Դուք ողջ լինէք, ևս մեռած: Հայ Հայ.

ՊՈՒՂԻ. Եի ԴՈՒԿԱՆԱ —

Արցախի հինգ մելիքներ.

Զեր սըրով երդումն արէք,

Որ այս սիրուն միութեան

Հաւատարիմ պիտ լինէք: Հայ հայ:

ԱՄԵՆՔԸ. —

Հուռայ: (Հանում են սըրերը):

Այսուհետեւ միաբան հնք մենք իրար.

Այս մենք իրար.

Արցախի հինգ մելիքները միշտ եղբայր.

Այս միշտ եղբայր.


Հայրենիքի պաշտպան լինեն անդադար.

Այս անդադար.

Որ միշտ յիշուի անունները դար է դար.

Այս դար է դար, այս դար է դար այս դար է դար:

Վ Ե Ր Զ:



Պուղիի գերը կատարողին խնդրում եմ բնագրեց դաշտ
խօսքել չաւելացնել:

Պուղին, ձգտելով իր վրա վերցրած նպատակը իրազործե-
լուն, ուրիշների հետ իր կատակները և սրախօսութիւնները ա-
նում է որպէս թէ ստիպուած և ի միջի այլոց, մի ըոպէ չմոռա-
նալով, որ ինքը հասարակ ժարդ չէ...:

Այլ է, երբ նա իր,—Մելիք-Շահնաղարի հետ է, Վերջինս
ըստ իր բնաւորութեան սիրում և ներում է Պուղիին ամեն կա-
տակ: Աւստի և Պուղին նրա մօտ զգում է իրեն բոլորովին ազատ:

Այն մօմենտներին, երբ հաշտութեան նպատակը վտանգ-
վում է, Պուղին միջամտում է շատ լըջօրէն:

Ռէհանը թէ ի բնէ չար կին է, բայց բռնում է իրեն ծա-
նըր: Աւստի և իր տրտունջը արտայայտում է աննկատելի կեր-
պով հօնոց տալով: Երբեմն էլ Պուղիի կատակների վրա իր ժպի-
տը դադել չկարողանալով:

Գիեսը բամադրիլ ցանկացողները պէտք է վճարեն չխաղա-
ցած քաղաքներում ընդհանուր մուտքից առաջին անգամ՝ 20%,
յետոյ 10%:

ՀԵՂԻՆԱԿԻ



NL0326011

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻՒԶԵՒ ԱՅԺՄ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Մկիճի հարսանիքը	կօմեղիա	1	արարով.	II	տպագր.
Նախթի Փանտան	"	"	"	"	"
Պոէտի երազը	"	"	"		
Էքսպրոպրիացիա	"	"	"		
Անկոչ հիւր	"	"	"		
Խելագար Մինաս	"	"	"		
Մարուող ճրագներ	դրամա	3	արարով	II	տպ.
Նշանուածներ	"	"	"	"	"
Ոճիր	"	"	"	"	"
Մանկական Գարբեջուկ					
Գաճաճ					

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ,

Արշակ Թագուարի սէցը 5 արարով տրագեդիա
 Քառ կօմեղիա 3 արարով.
 Վարդան Մամիկոնեան 4 ար. տրագեդիա.
 Մկիչի հարսանիքը կօմ. 3 արարով (օպերետ).
 Արտաշէս թագաւոր և Սաթենիկ օպերետ 4 արարով.
 Մի հարսնացու չորս փեսացու օպերետ 3 արարով.
 Տարօրինակ հիւրեր օպ. 3 արարով.
 Զղումն կօմեղիա 3 ար..

Հեղինակի հասցէն. Нахичевань ն/Դ. 22 լ. № 4 Ալ. Ա